



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
08դեկտեմբերի 2023 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի ավագանու նիստին ներկա էին թվով 14 (տասնչորս) ավագանու անդամներ՝ Արտակ Գևորգյան, Արեն Դալլաքյան, Արմինե Երիցյանը, Սիմոն Զախարով, Ֆլորա Թաթուխաշվիլի, Հրանտ Հախվերդյան, Հարություն Ձավարյանը, Համլետ Ղուլյանը, Դավիթ Ղումաշյանը, Մկրտիչ Մարգարյանը, Լորա Սարգսյանը, Հայկ Հովակիմյանը:

Բացակա էին ավագանու անդամներ Արկաղի Թամազյանը, Տիգրան Պապոյանը, Նարինե Թորոսյանը, Անդրանիկ Թամազյանը, Անահիտ Բադալյանը, Գայանե Ալլահվերդյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Լաուրա Մելիքսեթյանը, Արամ Ռամազյանը, Արթուր Դավթյանը, Սենիկ Չերչինյանը, Աբել Տիտանյանը:

Նիստին ներկա էին հրավիրված անձինք՝ ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը, Լոռու մարզպետարանի ներկայացուցիչներ, Ալավերդու հոգևոր հովիվ Տեր Միքայել քահանա Շաղոյանը :Նիստը տեղի ունեցավ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի նիստերի դահլիճում(հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, քաղաք Ալավերդի, Ջորավար Անդրանիկի 8/1)

Ավագանու նիստը վարում էր ավագանու նիստին ներկա ավագանու տարիքով ավագ անդամը՝ Սիմոն Զախարովը:

Քանի որ հրավիրված նիստից բացակայում էր Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը , ապա նիստն արձանագրելու իրավունքը տրվեց Ալավերդի համայնքի ավագանու անդամ Հարություն Ձավարյանին:

Հարություն Ձավարյանը նիստը վարող Սիմոն Զախարովին փոխանցեց ավագանու անդամների գրանցման ցուցակը:

Մինչ նիստի օրակարգին անցնելը Սիմոն Զախարովը հայտարարեց, որ համայնքի ավագանու նիստն իրավազոր է. նիստին ներկա է ավագանու 14 անդամ՝ օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելին:

Սիմոն Զախարովը հայտարարեց նիստի բացման մասին:

Նիստը վարողը հայտարարեց նիստի հետևյալ օրակարգը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի երդում:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Սիմոն Զախարով/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 08-ի նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի երդում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ - 14 ԴԵՄ -0 ԶԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց /ՈՐՈՇՈՒՄ N 93- Ա/

Ընտրված համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանը, մոտենալով ամբիոնին, արտասանեց երդման տեքստը.

«Ստանձնելով Ալավերդի համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչներին:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս ամենացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Երդումն ավարտելուց հետո հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը:

Համայնքի ղեկավարն ստորագրեց երդման տեքստի տակ, որն ի պահ հանձնվեց համայնքապետարանին:

Ավաբերդու հոգևոր հովիվ Տեր Միքայել քահանա Շաղոյանը ողջունեց բոլորին, շնորհավորեց համայնքի ղեկավարին և կարդաց տերունական աղոթքը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը: Ողջույնի խոսքերից հետո համայնքի ղեկավարը հայտարարեց նիստը փակված:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԵՐԻՑՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԶԱԽԱՐՈՎ ՍԻՄՈՆ

ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ

ԶԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻԶ

ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ

ՍՄԲՍՅԱՆ ԱՆԱԿԻՏ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀԱՅԿ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԱՐՅԱՆ